



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

• ՏԱՐԻ ԹԻԻ 4

ՀԱՐԱՐ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԲՈՒԿՈՂՇՈՒՄ

ԶԵՆՈՐ

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԲՈՒԿՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆՆԻՍԱՅՈՒՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գարու, Օռոգտի-Պար հաստատութեան շէնք, Թիւ 16

(آ. آسادوریان) شرکت مطبعه مطبعه — باب مال جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՍՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութիւն Թիւ 52

Հատոր 40 փառա



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի
լիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԹ. ՓԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կառարի լազործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒԹՅՆԵՐ

- | | |
|---------------|--|
| ԲՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարչը Պօյու, Թիւ 120 . |

Կայսարեալ Երաւաւորութիւն

[Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Ձեռքէ վաճառում՝ քաղ փառա: Հասցէ՝
Ղալաթիա, Բամանաս փողոց: **ԱՐԵԻԵԼՔ**
հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խընափալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու չնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որովհետ ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնաւորապէս յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 4

ՇԱՐԱՐ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄԸ

Արեւելք օրաթերթին մէջ պարզ զարմացմամբ չէր որ կարդացինք Անգլիական թերթերէ քաղուած տարօրինակ դէպք մը, որ պատահած է կ'ըսուի Լոնտոնի մէջ:

Անգլիոյ մայրաքաղաքին փայտաշէն տուն մը, ատենէ մը ի վեր տարօրինակ և անհաւատալի դէպքեր կը պատահին եղեր գիշերանց, ահուսարսափ աղղկով տնեցիներուն, որոնք ճարահատ ոստիկանութեան դիմած և նոյն իսկ յատկապէս զրկուած պաշտօնեաներու ալ վախ պատճառած են:

Բէրինբուրգ Դարը շատոնց անցած և ոգիներու գոյութեան հաւատացողներ շատ ցանցառ թիւ մը կազմելով հանդերձ, չիտակը քիչ մը քիչ ծիծաղելի չէ Լոնտոնի թերթին տուած այս յուշկապարիկի տեղեկութիւններն և անոնց տրուած կարեւորութիւնը:

Մեր տղայութեան ժամանակ և մինչև հիմա կարգ մը ջատուկներ, իրենց թոռներուն հաճելի ըլլալու համար կը պատմէին և կը պատմեն բերինբուրգ շահատակութիւն-

ներէն տեսակ տեսակ չըլլալիքներ, որոնց ի լուր՝ տղաք յապուշ կրթեալ կ'ունենդրեն և վախնալով հանդերձ՝ հաճոյք կը զգան ու ժամերով կը նստին ի լուր այդ առասպելական աճեֆթոսներուն, առանց կարեւորութիւն տալու քունին, որ իրենց աչքերէն կը վազէ:

Չեմ գիտեր թէ Լոնտոնի այդ խորհրդաւոր տան վրայօք ըսուածները ո՞ր աստիճանի սուտեր են, և կամ ի՞նչ պարագայներու տակ տեղի ունեցած են բանդագուշական այդ զարմանալի պատահարները, սակայն ամէն պարագայի մէջ Լոնտոնի պէս քաղաքակրթեալ և գիտութեան զենիթը հասնող ժողովուրդի մը համար քիչ մը ծաղրելի է ըստ իս՝ հաւատալ նմանօրինակ դէպքերու, որոնք հիմնական և վաւերական չըլլալէն զատ, ծաղրելի մասալներ ըլլալէ անդին չեն անցնիր:

Մարդուս երեւակայութիւնը այնչափ զգայուն և այնքան փափուկ է որ, շատ անգամ, նոյն իսկ մեծ գիտնականներ փորձուած են

տեղի տալ և ենթարկուիլ այդ կարգի ցնորական տեսիլներու, որոնք եթէ չեմ սխալիր արեան շրջանէն և ինչպէս ըսի, երեւակայութեան խաղերն են, իրականութենէ փարսախներով հեռու և ոչ բնական:

Ամէն անգամ որ ոգիներու վրայօք խօսք ըլլայ՝ իմ անձնական փորձառութեանս մէկ իրական և վաւերական պատմութիւնը մէջ կը բերեմ, քիչ չատ համոզելու համար ընդգիմախօսս, երբ կը տեսնեմ թէ կը յամառի և կը ծանրանայ իր նախապաշարեալ գաղափարներուն վրայ:

Տղայ էի լաւ կը յիշեմ, ձմեռ գիշեր մը, մեր տան մէջ իրարանցում մը ելաւ, ամէն ոք մեծէն է՛ն պզտիկը, սենեակէն դուրս ելած՝ չէին կրնար մեկնել ահագին աղմուկը, զոր կը լսուէր վարէն, մեծ սօփայէն:

Բաւական ժամեր տեւեց այդ շունդալից աղմուկը, որուն կընկերանար սուր ճիշեր, գահգահաններ և խնդուքներ, որոց մէջ կնոջ մը թրթռուն ձայնն ալ կար:

Ո՞վ կրնար ըլլալ այս աղմուկը հանողը, անպատճառ բերիններն էին կըսէին, և տանը մէջ մէկը չէր համարձակէր պրպտելու և վար իջնալով հասկնալու բուն իրողութիւնը:

Երեք չորս գիշեր շարունակուեցաւ այս զարմանալի մի եւ նոյն ատեն սոսկում եղեւ թիւնը:

Իրիկուն մը սակայն, մեր ազգականներէն հիւր մը, որ նոյն իրիկունը մեր տունը կը գտնուէր, չեմ գիտեր ինչ բնազդով մը յարեց,

— Ես աս գիշեր բերին պիտի բռնեմ:

Կէս գիշերին երբ անով ու թողով ամէնքըս ալ սենեակինս քաշուած կսպսէինք բերիններու աղմուկին, մեր հիւրը սիկառ ի բերան վար իջնալով սկսաւ պտըտիկ ճիշդ այն ատեն՝ երբ իրօք վարը գրուած աթոռները սկսած էին շարժիլ (ճիշդ Լոնտոնիին պէս) և սուր ձայներ սոսկում կը պատճառէին ամենուն:

Կէս ժամ հազիւ անցած թէ չէ՝ վարը, ահագին ձայներ սկսան լսուիլ, ու ամէնքս դուրս ելանք մեր սենեակներէն, քանի որ մեր հիւրին ձայնը զմեզ կը կանչէր.

— Հասէք, եկէք, բերին բռնեցի ...

Եւ ի՛նչ տեսնանք աղէկ ... Մեր սպա-

սուհին, իր ճերմակ գիշերնոցով, անոր ետեւէն յանկարծակիի եկած սպասաւորը ...:

Որպէս զի, սպասաւոր և սպասուհի, ատեն ունենան և համարձակ սիրաբանելու, սիրուելու իրարու հետ, և վախը չունենան որ տունիներէն մէկը զիրենք հալածէ կամ իրենց մօտենայ՝ խելացութիւնը ըրեր են, 5-10 աթոռները իրար կապելով չուանը ձեռքերնին սենեակ մը քաշուիլ, ու հոն սիրաբանել ըստ հաճոյս, ատեն ատեն չուվանը քաշելով և անտանելի ձայներ հանելով, որոց իւրը, «բերի կայ» ըսելով մէկը չէր կրնար համարձակիլ զիրենք տեսնելու:

Այս իրական պատմութիւնը մէջ բերելով կուզեմ ըսել թէ Լոնտոնի այդ յուշկապարիկի դէպքը՝ եթէ ոչ այսպէս, գէթ ասոր մէկ ուրիշ ձեւովը տեղի ունեցած պէտք է ըլլայ, քանի որ գիտութիւնը չընդունիր գոյութիւնը այդ կարգի ոգիներու և ոչ ալ կրօնքը:

Ըստ իս այս կարգի առասպելական պատմութիւններ, որոնք իրականութենէն հեռու լոկ ենթադրական շինծու պատմութեանքներ են, պէտք չէ հրապարակուին, քանի որ պզտիկներն ալ, որոնք օրուան թերթերը այնքան ախորժով կը կարդան, կը նախապաշարուին և իրենց մատուց խմոր միտքը կը խանգարի, որուն հետեւանքը կըլլայ ֆիզիքական տխրածութիւն և վախկոտ ջղայնութիւն:

Չարմանալի է չիտակը Անգլիացւոց այս տկարամիտ հրատարակութիւնները, Անգլիացւոց կ'ըսեմ, որոնք այնքան լաւ գիտեն այս փափուկ խնդիրները և անոնց հետեւանքը, և դարձեալ չեն քաշուիր սուտն-իրաւ հրատարակութիւններ ընելով իրենց տիպար թերթերուն մէջ, ուր բերիի պատմութենէն աւելի՝ վաճառականական և գիտական շինիչ հրահանգներ և գիտելիքներ կսպասուի:

Մեր Ազնիւ պաշտօնակիցը Արեւելք լաւ կ'ընէր եթէ այդ թարգմանութեան ճակատը դնէր հեզնական սա նշանը (?) զոր պիտի փրկեր ամբողջ գրուածքը:

Այս նիւթին լուսաբանութիւնը կսպասենք Արեւելքի տիպար և ներհուն խմբագրապետ Թօփսեան էֆէնտիէ:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԳՆԻՊԱԿԻ ՕՋԵՊԻՆԸ

Ըսէ՛ք, խնդրում մի քաշուիք, կեանքեր-
նուդ մէջ բառամանա սիրած էք . . . :

Եւ որովհետեւ կրնայ ըլլալ որ ձեր մէջէն
շատեր քիչի կաթով և կամ մօր ստինքէն
անած ու մեծցած ըլլան, ուստի en deux mots
նկարագրեմ բառամանան :

Բառամանան ընդհանրապէս Յոյն գիւղա-
ցիի մը աղջիկը կըլլայ, կորովի, ուժեղ, հո-
գին հիւթովը և կովին կաթովը անած ուռ-
ճացած, և որուն անունը ինչ որ ալ ըլլայ,
զանուած տան տիրուհին անպատճառ կը փո-
խէ Մառիքայի կամ Էլէնիի, որը որ բերնին
գայ :

Արուեստական գեղեցկութենէն և թուա-
լէն չոր բուստա մը իսկ չեա կրնար տեսնել
բառամանային վրան, բայց այտերուն նայե-
լով՝ խնձորը կը կարմրի ամօթէն և չրթունք-
ները տեսնող կեռասները՝ նախանձէն կը ճա-
թրոտին :

Երկու անդամները միայն կոշտ Վըլլայ
բառամանային, ոտքերը և ձեռքերը, անկէ
անդին . . . ճաշակի խնդիր :

Բառամանան ամուսնութեան առաջին
պտուղը մօրը գիրկը տալէն վերջ՝ ուրիշի մը
գաւակը դիպնելու կոչումը ունի, ցերեկնե-
րը ծեծով՝ գիշերները ծիծով . . . որպէս զի
ձայնը դուրս չելլայ լակոտին :

Ամէն բառամանա՝ ախաւսեռօս մը կու-
նենայ, որ շաքաթը անգամ մը կուգայ կը
հովուէ իրենը, և որ ընդհանրապէս բիււ-
քաւեքով երիտասարդ մը կըլլայ, կամ մա-
կուկավար և կամ գինեպան :

Երբ բարեկեցիկ տղու մը համար բառա-
մանաի մը պէտքը զգացուի, եկողին՝ տան
տիրուհին կաթին կը նայի, աղան սուռաթին,
տան երիտասարդը . . . կռաթին : Եւ ահա
ինչո՞ւ շատ դժուար կ'ըլլայ անոնցմէ հատ մը
յարմարցնել տանը մէջ :

Բառամանաներու է՛ն սիրականը և մտե-
րիմը կ'ըլլան խոհարարները, և իրաւ է երբ

կ'ըսեն թէ՝ «աչճի եղած տունը կուտը աղան
կուտէ, սիւտանան . . . պուտը» :

Երբ բառամանան presentable բան մըն է,
գիրկի տղան սիրողներ շատ կ'ըլլան, ճար-
պիկ և մամածակ Ֆլիոթեօնի մը համար տը-
ղան համբուրած ատեն մատները անո՞ր երե-
սին դպցնելը մեծ բան է :

Բառամանաներ կան՝ որոնք իրենց թեւի
պէպէն կամթտելով միշտ կը լացնեն, որպէս
զի դուրս՝ փողոց իյնան :

Քու ամբողջ վաճառականի համբաւովդ,
գեղեցկութեամբդ, դրամովդ, և չիք թը-
նիւովդ, «սաղաքօ» ըսէ բառամանային,
«fais-toi un bon mari» և կը պատասխանէ քե-
զի, և անդին իր մուրտ կատու ախաւսեռ-
օսին աղտոտ բազուկներուն մէջ երբ նետ-
ուի՝ «բսիիմու», «ձօզմու» ըսած ատենը
աչքերը կը մարմրին և կը վերանայ :

Բառամանային գուլպաները անպատճառ
պաշտամալը կըլլան, և վերջացած մատամին
հին իրէքլի ժառրթիէռներովը : Միսօն բի-
րէի կեղտերէն չերեւար, և դէմքին վրայ
անպատճառ մօեղները բեսեմս բանած կըլ-
լան կաս կարմիր : Բօռսէի տեղ քօռսած կը
դնեն, և տղոց կաթ տուած ատեննին ի հան-
դէս կածեն այն դոյզ կիսագունդերը, որոնց-
մէ՝ պղտիկներէն աւելի մեծերը օգտուիլ
կուզեն :

Սրդ քանի որ այսքան գովեցինք այս
ապրանքը, հիմա երբ խօստովանիմ և ըսեմ
թէ՝ էր երբեմն ձեր անառակ որդին, պա-
տեհութիւնը ունեցած է Ֆլիոթիկու անոնցմէ
մէկուն հետ . . . կ'ամօթէ՞ք . . . : Ինչ մեղ-
քըս պահեմ, հոս պիտի պատմեմ :

Իրիկուն մըն ալ շուկայէն դարձիս տեսայ
որ մեր քովի դրացւոյն դրանը առջեւ գլու-
խը ճերմակ պօնէյով տատրակ մը կեցած էր
վեց ամսու տղան գիրկը, տատրակ մը՝ որ
մեր դուկից քիւմէսիններուն չէր նմանէր,

կատարեալ թէփէլի մըսը բիլիմի մը, որուն ամբողջին 7 դրշ. կառնէ թօգաթլեանը:

Ծօ՛ . . . ահա որս մը, անոր համար որ a la մոմ բուֆ կը պառկի, և մինչեւ որ տաան և վեց անգամ սաւանին աջը ձախը չը դառնայ քունը չի տանիր . . . ամուրիութեան երեսէն:

Այդ իրիկունը, որպէս զի իւրֆիւքմիւս չընեմ խուշիկը, որ իր տան տիրուհիէն չորս շապիկ գեղեցիկ էր պէտք է ըսել, սանկ աչքիս պոչովը նայելէ վերջ՝ առանց կռնակս դառնալու տուն մտայ:

Գիշերը ո՞վ է քնացեր:

Առաւօտուն կանուխ դեռ խօսողիկը չի խօսած պարտէզ ելայ, ուրկէ քովի տան կռնակի կողմը կերեւար: Անշուշտ բառամանան տանը ետեւի կողմը պառկած էր: Եւ իրօք ալ անանկ է եղեր, քանի որ շատ չի քնեց իր նէկիթէ վիճակին մէջ ելաւ պատուհանը բանալ, մինչ տղոն ճանկ ճանկ կը պօռար, և իսկոյն անյայտ եղաւ աչքէս:

« Բիճ մը քեզի » ըսի ինքն իրմէս. հիմա ան բաղդաւոր տղան, արդեօք ինչ երազային քուռեր կընէ կոր կիսաշխարհներուն վերայ, զորս իր տրամադրութեան տակ դրած են ծնողքը շուայլօրէն փոխան երկու ոսկիի ամբողջ ամիս մը:

Հետեւեալ իրիկունը նորէն դուռն էր ան:

Այս անգամ յանուն դրացնութեան՝ էն սիւլթ մը ըրած չըլլալու համար, երբ իրեն նայեցայ, դէմքիս գիծերը փոքր ինչ խնդու մի փոխեցի, առանց բարեւ տալու սակայն:

Ձանթալը անտաշ կինը նորէն անդին նայեցաւ . . .:

Ալ միտքս դրի ճանկս անցնելու համար, ամէն միջոց խորհեցայ այդ գիշերը, և բարեաղդարար հետեւեալ օրը կիրակի էր, մինչեւ իրիկուն տունն էի:

Ախ . . . եթէ բաղդ ունենայի՝ մերիկները այդ տունիկներուն հետ գժտած չէին ըլլար ամիս մը առաջ պողոտայի ֆլեֆէի մը համար, զոր քոցայով կը զրկէի իրենց եթէ . . .:

Յերեկին երբ հագուած չքուած պարտէզը թուռ կընէի, յանկարծ բառամանան տեսայ որ տղան գրկած դէպի մեր կողմը կուգար: Զի մոռնամ ըսելու որ մեր և քովիներուն պարտէզին մէջտեղ միմիայն թէլ մը քաշուած էր:

Խնդացի՝ անդին նայեցաւ, հաղացի՝ առեւմուտք դարձուց լուսապայծառ դէմքը, բռնքացի՝ քիչ մը աւելի հեռուն գնաց, տղան պլշկել չտալու համար. վերջապէս ինչ որ ըրի . . . ը՛նհ . . . օգուտ չըրաւ:

Սակայն և այնպէս այդ բառամանան սրտիս վրայ նստած բուրդ կը մանէր, Բըռնուած էի:

Յաջորդ իրիկունը երբ շուկայէն դարձիս, որոշած էի ըստ սովորութեան՝ թաթիկովս պզտիկը սիրել . . . իբրեւ դրացի . . . հոն չէ՛ր, տունը գլուխս դարձաւ, ինչպէս նաեւ սիրտս՝ վեր ի վայր:

Անպատճառ տղեկը պտոյտի տարած ըլլալու է ըսի ինքնիրեն, և առանց մտիկ ընելու մօրկանս քօմանաւ, որով միս կը ճուար երեկոյեան ընթրիքի համար, անմիջապէս գացի աչքէ անցնել այն վայրերը՝ ուր ընդհանրապէս կը ժողվուին բառամանները մութը կոխելէն առաջ:

Հո՛ս, հո՛ն, անդին, ասդին, ո՛չ ոք կար, ոչ ոքի համար կրնայի ըսել թէ՛ հա՛ մեր դրացիին բառամանն էր: Շատ բառամաններ կային հող, բայց բոլորն ալ սփառքաւ. և ոմանք ալ առանց (ո) գիրին:

Ու երբ գլխի կոր ու մտածկոտ, ինչպէս նաեւ յուսահատ bien entendu տուն դառնալ կորոշէի, դէպի մեր թաղը տանող պարտէզներու մէջէն . . .:

Հաւատացէ՛ք, չորս տարիներ անցնելէ վերջ երբ այս նիւթը մօքէս կը հանեմ ու ի գիր կառնեմ, ջիղերս ոտք կելան ու կրսկըսիմ դողալ: Մեր հաւնած բառամանն, մեր միմօտիս բառամանն, մեր ֆիպիր բառամանն, վերջապէս այն բառամանն որ ինծի պէս երիտասարդի մը ո՛չ թէ բարեւ, այլ՝ ակնարկ մը անգամ կը պանար . . .:

Եթէ կարելի է հոս ստորագրեմ, և չի չարունակիմ իրողութեան նկարագրականը, ձեր սիրտն ալ չի խառնըւցնելու համար . . .:

Ախ . . . ան բառամանն որ . . .

Ուրբերնիդ պագնեմ. եկէք չըսեմ . . .:

Իշտէ ա՛ն բառամանն որ . . .:

ԲՕՊՈՒԱ

Յ. Գ. — Նորէն սիրտս չեղաւ պիտի ըսեմ:

Ան բառամանն՝ որ, կամ որուն ախը կը քաշէի երեք օրէ ի վեր, ահա ան բառամանն՝ ծունկերը վեր առած նստած ծառի մը բունին վրայ, տաքօրէն կը տեսակցէր . . . Շառապցիի մը հետ, որ ան ալ իր կարգին գուլպաները հանած մերթ քիթը մերթ ոտքին մատները կը խառնէր, ու տղան անդադար կը ծծէր պարապ կաշին, որ ո՞վ գիտէ իրմէ առաջ գինիի ծորակ կարծողը պարպած էր le contenu:

Նոյն

"ԶՎՈՒՆԿ"Ը

ÉTUDE

Զվոնկը կ'ըլլայ միշտ 18-23 տարեկան...

Յայտնի չէ թէ ո՞ր վայրն է ամէնէն աւելի արտադրող... այս բերքը, բայց սա ճշմարիտ է որ, յաճախ Բերայի մայթերուն վրայ կը նշմարուին ասոնք:

Զվոնկը իր մագերը միշտ նորաձեւութեան համեմատ կը յարդարէ, այսինքն à la vierge, չի մոռնալով ծեփել զանոնք «eau de Lavande» ով հանդիսաւոր օրեր, սակայն կան ոմանք ալ որք à la Brossetէն վաղ չեն անցնիր: Զալը սիւփիւրկեսիի յիշատակը պահելու համար գուցէ... ո՞վ գիտէ...:

Իր չորս թելէ բաղկացեալ պեխերուն շատ հոգ կը տանի Զվոնկը, որուն ծայրերը միշտ վընային դէպի հիւսիւս, coins levés, չի մոռնանք ըսելու թէ՛ Կողմնացոյցի յատկութիւն ալ ունին անոնք, զի միշտ հիւսիւս նայող թելերը վայրկեանական հարաւ կը դառնան... բաթրոնին առջեւ...

Կիրակի օրուան հագուստը շատ նոր է վայելուչ է, և որ Զատիկը բոլորելէ վերջ լուր օրերու կը յատկացնէ, տեղի տալով նորագոյնին՝ որ գնած է Կարմիր Ս.քլորէն, ապառիկ — չեմ գիտեր, բայց սա իրաւ է որ յիշեալ վաճառատան հաւաքիչը, ամէն շաբաթ երեկոյ իր չուրջը կը դեքերի:

Պոթերը, հարկ չի կայ ըսելու որ պարտիզպանը իբր բրիչ կրնայ գործածել, այնքան սրածայր են, Զվոնկին ֆօքօլը նեղ և երկար կըլլայ միշտ, երկար՝ իր ականջներուն... բարեւ տալու չափ. նեղ՝ իր դէմքը կարմըցընելու աստիճան:

Իսկ գալով իր քրաւաթին, այս վերջինը քօստիւմէ է իր բաճկոնին վերի ձախ գըրպանը գտնուած ալ պէնի կարմիր թաշկինակին որուն ծայրը իշու ականջի նման դուրսէն վար կը կախէ միշտ:

Ձեռնոց, պիտի ունենայ անպատճառ... ամուսնացած օրը:

Զվոնկը մոլի է ծխելու, երկու տեսակ ծխախոտ կը գործածէ, մին պատրաստ սիգար 70նոց, իսկ միւսը 30նոց և 60նոց հաւ-

ման եղած, առաջինը կիրակի իսկ վերջինը լուր օրեր գործածելի:

Հանդիսաւոր օրեր երբ տեսնելու ըլլաք Զվոնկը՝ կ'ըսէք իւրովի — արդեօք Քարնէկիի որդին է —, իսկ եթէ լուր օրեր հանդիպելու ըլլաք իրեն՝ խեղճ թշուառականի մը պատրանքը կ'ազդէ ձեզ:

Զվոնկի առաջին բնաբանը սա է «այսօր ունիս կեր, վաղուան վրայ մի մտածեր» և ահա ճիշդ ասոր համար է որ շաբաթականը կը հալեցնէ մինչեւ կիրակիէ երեկոյ, և երկուշաբթի՝ կամուրջին 10նոցը հօրմէն կառնէ:

Գրականութեան ջերմ սիրահար է Զվոնկը, այնպէս որ հաւասարապէս կը կարդայ Հիւլօն, Քօթէն, Պալգաքը, Զօլան, գիշերը անկողնոյն մէջ... իբր քնաբեր, և կատարեալ ուշադրութեամբ կ'ընթեռնուի Գրքըքճեանի վրայ կղմայլի, Նինիի վրայ կը խնդենայ, Վ. Թօշկին յօդուածներուն՝ պոսալօ կ'ըսէ և ainsi de suite:

Զվոնկը միշտ յօդուածներ ալ կը գրէ, բայց միմիայն իրեն համար, վասն զի միշտ իր գրպանին մէջ կը կրէ զանոնք, և ամառը գալուն՝ այդ գլուխ գործոցները հրատարակութեան... չի տար, վախնալով որ մի գուցէ խմբագրատանց անկիւնը քոտտին:

Ձի մոռնանք ըսելու թէ շատ սրամիտ է մեր Զվոնկը, և չեմ գիտեր թէ ո՞ր վարժարանին մէջ ուսումնասիրած է այդ ճիւղը և ո՞վ է իր դասատուն, բայց գիտցողները կ'ըսեն թէ՛ Զվոնկները անբաժան բարեկամներն են Կալօօշին:

Քաջ գաղղիներէն գիտէ Զվոնկը... Poireը soirին հետ շփոթելու չափ:

Տխաիկ ընող չէ երբեք Զվոնկը՝ գաւազանը մատներուն մէջ չուրջանակի դարձնելով կը պտըտի ու կը պտըտի առանց կանգ առնելու: Երկու տեսակ քալուածք ունի ան, մին որ լոկ հանդիսաւոր և կիրակի օրերու յատուկ է, échantillon sans valeur parisienի մը երեւոյթն ունի, գլուխը ցից ուսերուն վրայ, կուրծքը դուրս, բթամատները ժլիւէին անցուցած՝ ճամբան այնպէս կերթայ որ կարծես կօշիկներուն տակ զատ զատ զսպանակներ դրուած են, որ իւրաքանչիւր քալաւափոխի վեր վեր կը ցատկեցնեն զինքը: Իր միւս քալուածքը յատուկ է լուր օրերու,

ուր եթէ հանդիպինք իրեն՝ ակամայ սա մը-
տածումը կունենաք, «խեղճ տղայ, ո՛վ գի-
տէ ի՞նչ կորսնցուցած է որ այդքան ուշադ-
րութեամբ գետին յարած է աչքերը»:

Զվոխկը կը ճանչնայ հրապարակի բոլոր
սկանաւոր անձնաւորութիւնները... իրենց
անուններէն, երբ առիթը ունենայ կարդալու
բաթոնին մոռացած լրագիրը, զոր խնամով
կը ծալէ գետեղելու համար ժաքէթին աջ
գրպանը, ուր կը մնայ քանի մը շաբաթներ:
Զվոխկը նոյն այդ հարուստ և ականաւոր
անձանց հետ յաճախ չի ման մէջ է... երա-
պին մէջ:

Զվոխկը հրապարակ ելած օրէն սկսեալ
գրամօթիտով աղջիկ կը փնտռէ, որուն հա-
մամտութիւնը պէտք է լինի իր շահածէն
հարիւր անգամ աւելի այսինքն, եթէ 200
դրշ. է իր ամսականը՝ օրորդին օժիտը
պէտք է ըլլայ 200 ոսկի, իսկ եթէ պատահ-
մամբ տարեգլխուն իր ամսականը բարձրա-
նայ 250ի... անմիջապէս գրամօթիտի հրա-
պարակը զգալի ազդեցութիւն մը կը կրէ...:

Շատ լաւ պարել գիտէ Զվոխկը, և ե-
րեկոյթին իր անկաթէ ըրած «Dame»ին ոտ-
քերուն մինչեւ որ երեսուն անգամ չի կոխէ՝
չի լքեր զայն:

Եւ pour mot de la fin ըսենք թէ՝ Զվոխկ-
ը հոմանիշ է հաւկիթի գիւպի, ինչպէս նաեւ
տուլուի:

Գ.Ա.ՄԷԼԻԱՍ

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔՆԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ

Որպէս զի գոհացում տանք մեզ հասած
չափ մը խնդրանքներուն, այս անգամ որո-
շած ենք ընդունիլ այն բոլոր զբօսալի և չիք
հանելուկները բացէն զրկուած ո՛րեւէ անձի
մը կողմէ, պայմանաւ որ լուծողին յատկա-
ցուած պատշաճ նուէրը նախապէս մեզ շըր-
կուի:

Ամէն անոնք՝ որոնք կը փափաքին իրենց
սրամիտ հանելուկները առաջարկել մեր ըն-
թերցողներուն, կրնան օգտուիլ այս նոր
կարգադրութենէն:

ՍԿԻՏԱՐԻ

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻՆ

ԵՐԵՎՈՅԹԸ

Այս շաբթու, Սիրելի Ընթերցողներս,
թէեւ բաւական հետաքրքրաշարժ պատմու-
թիւն մը ընել մտադրած էի, սակայն յար-
գելի Տնօրէնիս ըրած խօսամանս համաձայն,
վերնագիրս կ'ընտրեմ իբրեւ շաբթուան նիւ-
թըս, և կ'անցնիմ գրասեղանիս առջեւ՝ սա
քանի մը սիւնակները մրտեղու:

Չէ՞ մի որ հարկը օրէնքը կը լուծէ կ'ըսեն:

Այս կարճ այլ ալդու բացատրութենէն
յետոյ ուրեմն՝

En avant.

Այնչափ reclameներէն ու իրարանցումնե-
րէն յետոյ այդ շքեղ երեկոյթէն զրկուիլը
ինծի համար սոսկալի հարուած մը պիտի ըլ-
լար անշուշտ:

Հակառակ պիտի ըլլայ ես՝, սովորակա-
նէս ճիշդ ժամ մը ուշ հասայ տուն, ժամա-
նակ չ'կար՝ պատրաստուելու էր:

Կերակուր ուտելակերպս եթէ տեսնէիք,
խաչոր վրանիդ փուշ փուշ կ'ըլլար: Ձեռ
գիտեր թէ ես կերակուրը կերայ՝ չէ թէ կե-
րակուրը զիս կերաւ, այնչափ տճապարեցի:

Շո՛ւտ, ըսի մօրս, հազիւ առաջին պա-
տառը բերանս դրած, չո՛ւտ ժաքէթս...
ամա չէ պօսժո... չէ՛ չէ՛ շապի... ո՛ւժ
վարտի... ամա՛ն սա ո՛ւր է անունն ալ մոռ-
ցայ... հա... ֆո՛ռ՛ռ՛աքս բեր:

Ֆո՛ռ՛ռ՛աքդ մի՞, ըսաւ խեղճ կինը այ-
լայլած, տղա՛յ, աճապա զաֆուայիդ բան մը
դպաւ ի՞նչ եղաւ:

Պէ՛ ճանրմ զաֆուայիս ի՞նչ պիտի դպի,
ֆո՛ռ՛ռ՛աքս ես՝, ի՞նչ գիտցար, ասանկ գի-
չեր ժաքէթով երթամ տէ վրաս խնդացնե՛լ
տամ, և չ'երկնցնենք քիչ յետոյ հազուած
սգուած տունէն ճամբայ ելայ դէպ ի թառ-
րոն:

Ճամբան... ոտքերնիդ պագնեմ մի՞
հարցնէք, սաչափը միայն ըսեմ թէ՛ քուէս
անցնող տիկիներուն ու օրորդներուն քըս-
ուած օրօքանաֆ և տեսակ տեսակ հաւնա-

ներու հոտերեն քիթս ինկաւ, և այնչափ եղայ որ ... տէ կոճկէ ... :

Թատրոնին դրանք առջիւ Աղքատախնամի և Կարգադիր Մասնախմբի անդամները կեցած էին, որոնք կը տեղաւորէին հետզհետէ հասնող բազմութիւնը :

Ձիս ալ առաջնորդեցին մինչեւ տոմասկիս չողիրն սպառած տեղը և հոն սքօփ, տիտիկ ըրինք :

Թատրոնը լեցուած էր Սկիւտարի ծանօթ ընտանիքներով, Հայ-Լայֆ չըսելուս համար չի նեղանաք, չեմ ուզեր այս ածականը սիրելի գիւղացիներուս գործածել, ինչու որ մենք Հայերս սխալ ըմբռնած ենք անոր նշանակութիւնը, մենք Հայ-Լայֆ կ'ըսենք այն ընտանիքներուն՝ որոնց մէջ հանդարտ և անդորր կեանքը երբեք չեն նշմարուի, հապա Հայ-Լայֆ է կ'ըսենք՝ եթէ ամուսին մը քնին կը չփոթէ իր կնոջը հետ, և կամ տիկին մը ճուղկէ իր ամուսնոյն : Ըսածս եթէ սխալ է՝ հակառակը պնդեցէք, մի՛ քաշուիք, խաբրքս չի մնար հա՛ :

Երբ ընտանեկան չքեղ երեկոյթ մը կը սարքուի, մանաւանդ Աղքատախնամի համար, կարծեմ թէ պէտք չկայ ընտանիքները մէկ կողմ, իսկ առանց ընտանիքի եկողները ուրիշ կողմ մը նստեցնել :

Առաջին անգամը ըլլալով՝ այս տարի այդ բանը տեսնելու բաղդը ունեցայ : Կերեւի թէ այս տարուան Կարգադիր Մասնախմբի Մէկ ՔԱՆԻ անդամները ամէն բան չաբառըզ դատելով՝ ասանկ կարգադրած էին, առաջը առնելու համար հաղին գայթակղութիւններու, սակայն դժբախտաբար մինչեւ վերջը չի կարենալով գործադրել իրենց ծրագիրը ստիպուեցան գործը անուշ տեղը կապել :

Թատրոնը բաւական կոկիկ զարդարած էին, սակայն նախորդ տարիներու փայլը գրեթէ չէր նշամարուէր հոն : Ասոր ալ պատճառը անշուշտ՝ անդամներու միջեւ եղած անհամաձայնութիւնը կրնայ նկատուիլ :

Ուրիշ տարիներ ոչ Ֆրնսքգնր (տարբեր մեկնութիւն չի տաք հա՛) կը գտնուէր և ոչ ալ ֆեսանեհի, մինչդեռ այս տարի հազիւ թէ վարագոյրը կը գոցուէր՝ և ահա «Չամլընա սուլում, ֆեպապ ֆեսանե» ով թատրոնը կը լեցնէին, ինչ որ կարծեմ ականջի լաւ չի հնչեր :

Ասոնք թէեւ առնչութիւն չունին մեր նիւթին հետ, սակայն ի՞նչ ընենք, ալ անգամ մը ըսած գտնուեցանք :

Բարե՛ւ, պօռայ, քովէս մէկը, տասը աթոռ անդին նստողի մը :

— Ասծու բարին, Գիրգոր աղա, եալընը՞ սըն ...

— Հէ իշտէ, պէօյլէ ուշտու ...

— Օննիկճա՛ն նէրտէ, կէ՛լմէյէճէք մի ...

— Պըրադ գարտաշ, զավալընըն տէրտի վար, զաթէն տիւնտէն սէօյլէյօրըտը, եա գարըսընըն աղըրլարը թութմուշ մէճպուրի էվաէ պէքլէյօր ...

— Թօհա՛ֆ, ճահիլ տիր վէսսէլամ, պիլմէյօրքի Սեպտեմբեր այրնտա Աղքատախնամըն օյուըն օլուր, նէյէ պու գատարը տիւշիւնմէյօր ա՛՛ ճանըմ ...

— Պիլմէմ արթըզ, քէնտիսինէ սօր ...

— Էյի եա, պիլէթի տէ պօշա կիթտի, վա՛խ, վա՛խ, վա՛խ, պիլսէիտիմ ալըրտա պիլիմքինի պէրապէր կէթիրի իտիմ ...

— Նէ իսէ կէլմիշ օլա ...

Ձգենք ասոնք և անցնինք երկու օրիորդներու, որոնք tête à tête տաք խօսակցութեան մը բռնուած էին :

— Ասկայն հոգիս, այս գիշերուան թուալէթիթ ըսելիք չկայ շիտակը, եթէ ես երկտասարդ մը ըլլայի՝ անմիջապէս պիտի յափըշտակուէի քննէ ...

— Դուն անանկ կ'ըսես, մէյ մ'ալ անոր հարցուր, ի՞նչ ընեմ նէ պարապ է, երբեք տաքցած չէ վրաս ... (օնախ մը բըռնալին գլուխն է օրիորդ) :

— Քեզի անանկ կերեւայ սիրելիս, ես աղէկը գիտեմ եա՛ :

— Նա՛ նա՛ ներս մտաւ, նայինք հո՞ս պիտի գայ ...

— Սանկ մէյ մը ոտքի ելիր որ տեսնայ ...

— Ձըսի քեզի, չի տեսնալու զարկաւ, չա՛րը ...

— Մի ըսեր խուշս, անիկա վարպետ որսորդներէն է, դիտմամբ անդին գնաց, գործը յայտնի չընելու համար ... Նայէ աչքը քննէ չի դատեր կոր ... ա՛խ երջանիկ ես ... մինչդեռ ես ... հի՛ւ հի՛ւ հի՛ւ ... (վախ քէօռնամ) :

— Մի լար աղւորս, հարկաւ պիտի զըղ-

Չայ սրիկան ... յանցանքն ալ քուկինդ է պիտի ըսեմ, չի վշտանաս հա՛, ի՞նչ տեղը կար որ առաջին տեսած տղուդ բոլորովին ինքզինքդ յանձնեցիր ...

— Ա՛խ, ինչո՞ւ ատանկ կ'ըսես, մէկ ծայրը գլուխդ է, եթէ ինքզինքնիս շատ ծանրէն ծախենք՝ այն ատեն ալ հրապարակին վրայ այնչափ գտնուողներուն պէս մենք ալ տունը մնալ պիտի ստիպուինք ... (անանկ է ես՝ խըվամը կանցնի ...):

Պէ՛տ պապամ ըսի ինքնիրենս, թատրոն եկար չէնէմի սգաւորի տուն, մէկը ա՛խ կ'ըսէ իրենը անդիւր կողմը նստելուն, միւսը օՓ կ'ըսէ տասնըհինգ թէլ պըլըխը բիծին մէկը իրմէ պաղելուն, ու կամացուկ մը երկու նստարան ետեւ կ'անցնիմ:

Սակայն կը կարծէք որ՝ ալ հանգիստ կըրնամ նստիլ, հոս ալ տարբեր պատկեր մը:

Յիսուսնոց տիկին մը, որ օթեակի մէջը բազմած, իր վաթսուսնոց ամուսնոյն ուղղելով խօսքը.

— Ինծի նայէ Դէսրգ, հէրիք աչքդ չորս թարափը պտրտցնես, մեղայ ըսէ, երկու սահաթ է ֆառղին եմ, տեսնողը ի՞նչ կ'ըսէ, ճերմակ պըլըխներէդ ամէջիր, մարտի կատուները տառցար գէհէր ...

— Թո՛ւհ, գառը տէյիլմիսինիդ, քա կընիկ, ինչո՞ւ ատանկ ալէֆլէնմիշ կըլլաս կոր, ինչ հալի մէջ ըլլալս դուն ինէ աղէկ կիտէս տէ, մէջ մըն ալ կեցեր կէօյա անդիւրինիս ասդիինին կնկանը թախըլմիշ կըլլաս կոր ըսելով լախըռը կ'ընես կոր ...

— Չիյտեմ իշտէ, ես սանկ մը նայիմ նէ կը հասկնամ, ինծի լօլօ չըլլար կիտես ես ...

— Ինչ մաթահ ըլլալդ կիտեմ, թարիֆի պէտք չկայ ...

— Հէմ ինծի նայէ, բէք թեւերդ տախտակներուն մի քսեր կաղտօտի, աս տարի ալ աս մօտան հաներ են, ամէն տարի լօճաները խալի կը դնէին, հիմա հօտը պիլէմ չի կայ ...

— Նայէ իշտէ ատ ըսես նէ հախ ունիս կիւլս, աս տարուան անդամները ես քանի մը փարա էվլէօք քեար հանն տէյի, վէ եախօտ ինչ գիտնամ, խալիծին մէրամ չեն կըցեր հասկցնել տէ ...

— Մեղք գիտնայի նէ մանկալի տիպի քի-

լիմը կը պէրէի տէ տակս կը փռէի, զէհիրի պէս կը փչէ կոր մեղայ ...

— Կէշմիշ օլա, ինչալահ եկող տարի ողջը մնանք նէ՝ խօլթուխս կը զարնեմ տէ հետս կը պերեմ ...

Եթէ նոյն գիշերուան թատրոնին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները գրել հարկ ըլլար, ամբողջ թերթը չի պիտի բաւեր, ուստի մէկ երկու խօսք ալ խաղին վրայ ընելով վերջացնենք մեր ըսելիքները:

Մնակեան խումբը ներկայացուց իր ամենէն հին մեկտրամներէն մին՝ ՄԱՌԻ ՌՕՁը, որ հակառակ իր հնութեանը՝ Սկիւտարցիներուն համար նոր խաղ մը կրնայ համարուիլ, քանի որ տասը տարիէ ի վեր առաջին անգամն է որ բեմին վրայ կը ներկայացուի:

Խաղին հերոսը՝ Տիկին Ագնիւ, սովորականէն շատ աւելի լաւ կատարեց իր դերը:

Ջլախտաւորի կատարեալ քիփ մը առած էր, և այնչափ ընական ներկայացուց, որ երբ մէկ քանի գիւղացիներ կուգէին փորձանքէ մը աղատելու համար սպաննել զինքը, մօտս նստող մարդուն մէկը ինքնիրմէն ելած բարձրաձայն գոչեց «եազըզ տըր պէ, շու գաւըլը էօլտիւրմէսինլէր»:

Ժամը 8 ին կը մնկնինք:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՋՈՐԿ ԹԻԻՈՎ

ԱՅՈ՛ ՅԱՋՈՐԿ ԹԻԻՈՎ

ԶԱԶԱ

ԹԷՈՂԻԿ

ԵԼ

ՄԵՆԳ ՈՒ ՄԵՐՈՆԳ

Հանրագիտակի յաջորդ թիւին մէջ պիտի հրատարակենք երկու գեղեցիկ և հետաքրքրաշարժ պատկերներ, Տէր և Տիկին Նամուրի, որոնք Մոն Պլանի է՛ն անմերձե՛նալի բարձունքը ելած են վերջերս, իրենց քօտիւմենտովը:

ԳԻՃԵՐ ՄԸ ԻՔԵՐԱ, ՔԱՍԹԵԼԱՆՈՒ ՓՈՐՁԱՆՔԸ, ԾՈՑՈՒՈՐ ՀԵԼԼԵՆՈՒՅԻՆ,
ՕԹԵԼԻՆ ԿԵԱՆՔԵՆ, ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԵՆ, ՄԱՆԻՑԱՄՈՒ ՔԱԼԷ...
ԼՈՒՍԷ ԼՈՒՍ,

Ահա ձեզի եօթը հրաշալիքներ, եօթը հրաշալի վերնագիրներ, որոնցմէ որը որ հաւնիք՝ կրնաք ընտրել իբր *en tête* յետագայ յօդուածիս, զոր ներկայացնելու պատիւը ունիմ հոս։ *J'ai l'honneur*։

Ամէն իրինկուն երբ ուշ ժամանակ կամուրջէն անցնելով Սկիւտարի շոգենաւը կըշտապէի, բոլոր ծանօթներս, անոնք՝ որոնք Թօմասոնի տան բերինքէն չըլլալով հանդերձ, մենէ աղէկ կը կոչուին, քանի որ Բերա կը բնակին, զիս հտպիտի տեղ դնելով՝ զահ գահ կը խնդալին, իբր թէ խնդալիք բան մը տեսած ըլլալին վրաս։

Poor fellow! խեղճ արարած, անպատճառ աս էր մտքերնուն անցած խօսքը, քանի որ ես Բերան ձգելով Սկիւտարի կողմը կանցնէի... լուսէ լուս քուն քաշելու համար, մինչ իրենք...

Ամէն օր, այո՛, ամէն օր, ամէն իրինկուն, այո՛ ամէն իրինկուն կը կրկնուէր այս ծաղրական խնդուքը։

Անցեալ իրինկուն, երբ կրկին կամուրջէն անցնելով շոգենաւ պիտի մտնէի, սատանան — որուն համար գործ չունի կ'ըսեն — փորըս մտաւ։

Ծօ՛ աս իրինկուն ալ Բերա մնամ, էօլիւմ չէ՞ եա, ըսի ինքնիրենս, գիշեր մը Բերա մնալով ինչ կ'ըլլայ... երթամ սա Քասթէլանօի խումբը տեսնամ, որպէս զի երբ Հայ-Լայֆ սալօններու մէջ խօսք ըլլայ, կաքենամ ըսել թէ՛ թէնոռը տկար էր, բռիմատօնան սքանչելի էր, պատը գէշ չէր, և միւր գիւրքը սքանչելի էր, ևւայն։

Ուստի առաջին հարցումս քսակիս ուղղելով ըսի՝

Ով դու քսակդ իմ անբաժան, Բերա կենալս դատես արժան... և պիտի կրնաս զբօսցնել... կիւռիւ կիւռիւ չէ, այլ... աժան...

Համեստ բօթմօնէս ձայն չի տուաւ, սիւֆիւք իֆրաւսան կիլիւր, ուստի գաւառածքս փոխեցի, կուրծքս դուրս տուի, յոնքերս պոռտեցի, ու գաւառանս ճոճելով հազիւ մէկ քանի քայլ առած թէ չէ դէպի Ղալաթիա, տեսայ որ Սկիւտարի շոգենաւը սուլելով ճամբայ ելաւ։ Եւ, չեմ գիտեր ինչու, սանկ անգամ մը նայելէ վերջ, ակամայ ես ալ խնդացի։ Ըսել է անանկ կ'ըլլայ եղէր... *tant pis!*

Քառաքէօյ ոտք կոխելէս — երբ ժամը տասերկուքն էր — մինչեւ թատրոնէն ներս մուտքս, ինչպէս անցուցի, *pardon*, այդ ձեր գիտնալիք բանը չէ։

Ինչ կերայ, ինչ ըրի... *idem*։

Որի՞ հետ տեսնուեցայ, ո՞ր նստեցայ, ո՞ր ճաշեցի... *non plus!*

Երբ թատրոնէն ներս մտայ, կարծեցի թէ և կամ ինծի անանկ եկաւ որ բոլոր նստողները «ի խաչ հան գդա» պիտի պոռային երեսս ի վեր, քանի որ ես ինքս այդ ահագին բազմութեան մէջ մինակն էի ապուշ ապուշ չորս դիս նայող, իբր թէ լեռնէն նոր իջած ըլլայի... երկու ոտքով։

Կնախառն այդ ամբոխին պղտիկ մէկ միցեաթիւնը տարին անգամ մը տեսնելու պատիւը կունենամ՝ Սկիւտարի Աղքատախընամ երեկոյթին, ուրկէ ներս մտած առենս մեծ իրարանցում մը տեղի կունենայ «Լիլան եկաւ...» և այս չչուկը մինչեւ ականջներս կը հասնի, մինչ հոս՝ Լիլան ով է, Լիլան, հա՛, հա՛, հա՛, հա՛, տառանկ պիւճիւղներու մէթալիք տոռոզ չիկայ, քանի որ... ինչո՞ւս պէտք, մարդ բամբասելու միտք չունիմ ալ, գլխուս եկածը ճառելու։

Իտալացի խումբը շատ աղուոր ներկայացուց Այսան, գէթ ինծի անանկ երեւաց։ Վարագոյրը գոցուելէն վերջ սակայն, ջիդերօ դունդ հանելիք սովորութիւն մը կանցնէր,

այն է՝ ներկայ միւսիւններու ոտքի վրայ ելլալով կընիկ դիտելու սուրու ունակութիւններն, որով՝ առանց քաշուելու կը խնդային, աչք իջուի կը խաղցնէին, և նոյն իսկ կը խօսէին անանկ տամաններու հետ, որոնք չէին ճանչնար, և սակայն աղուոր ըլլալուն համար՝ ազգականէ աւելի կը վերաբերուէին անոնց հետ:

Ինչուս պէտք, երրորդ և չորրորդ վարագոյրներէն վերջ՝ հոսանքին հետ դուրս կը նետուիմ, ժամ առաջ օթէլ երթալով մշիկ մշիկ քուն մը քաշելու համար: Et je m'en vais!

Չեմ գիտեր կէս գիշերէն վերջ օթէլի մը դուռը զարկած էք...

— Ճը՛... ո՛... ո՛...

Ապակիէ դռնէն ներս կը նայիմ: Խեղճ ու կրակ կառսոն մը, հետեւեալ օրը գլխատուելու դատապարտուած բանտարկեալի մը պէս գլխիկոր կը քնանար, մինչ պզտիկ կազ մը կը լուսաւորէր չորս դին:

— Ճը՛... ո՛... ո՛...

Մարդուկը այս երկրորդ ձայնին ոտքի կելլայ և պոստած դէմքը դուռին ուղղելով՝ կէս քուն կէս արթուն կուգայ բանալ կըզպոնքը և զիս կը հիւրընկալէ, սուտ խնդուք մը չինելով... առտուն 1 շրուշ բուռ պուտուին սիրոյն:

Սանդուխներէն վեր կելլանք երկուքս ալ, ան առջեւէն, ես ետեւէն, և ահա դուռ մը բանալով՝ օտիսթէ քիռիէ կ'ըսէ, մոմս կը վառէ, դուռս կը գոցէ ու կը կորսուի կերթայ:

Ախպար տունս բուֆլա անկողինը ինչ ունէր, ինչո՞ւ ես Բերա մնացի... մտածելով, մէկ կողմէն կը հանուիմ:

Չորս կողմս օտար, ամէն կողմէ ցուրտ տպաւորութիւն մը կը ծանրանայ վրաս: Ո՛ւր եմ, պէ պապամ ինչո՞ւ Բերա մնացի...: Ու հազիւ աչքերս ձեղունին տնկած կսպասէի որ Մեծայարգն Մորփէոս մեղքնալով վիճակիս, զիս իր ընկալացը մէջ առնելով՝ տաներ — քիչ մնաց մեր տունը պիտի ըսէի — հոն՝ ուր ինծի պէս խեղճ ու կրակ մահկանացուներ թերեւս Գասթէլանօին փորձանքը չէին կրած՝ և ահա ճիշդ քովի սենեակէս կնոջ մը ձայնը լսեցի:

— Աման... մանիցամո՛ւ... խոխոթե՛մո՛ւ... աման...:

Այս մէկ սողը խնդրեմ, կիներուն կարգալ տուէք որ համը ելլայ, որովհետեւ անոնք կրնար ուզուածին պէս կարդալ, ճիշդ, բառերուն շեշտերովը, քանի որ խնդիրը նազի, տիգի, եանշխութեան վրայ կը դառնայ:

— Աման... աման...:

Մառչ Բաթոույ աֆսէլիւնէյին պէս ձայնը քանի կերթար զգալապէս կը բարձրանար, կատարեալ սքալա մը յորինելով, որուն կնկերանար հաստը էրիկմարդու նշվաղիւնն նոր ազատած ձայն մը:

— Սօքա՛ քալէ՛...

Սօքա՛... խելքիս պիտի գար ուրիշ բան չէ, ծեծկուռքի պատրաստութիւն, պոռալ, պոռպալ... միջամտել, մէկ երկու հատ ալ ճաշակել այդ երանելի փայտէն, որ ժամանակ մը ժամկոչներուն ձեռքը Ֆալախանի և պարիթ եղած «Եկայք ի Սուրբ» ի կը ծառայեր:

— Աման մանիցամո՛ւ... բէթէնօ՛...

Կինը կը ճգար, կը պոռար, կը հազար, կը թքներ, և par dessus le marché ոտքը գետինը կը զարներ ատեն ատեն...

Չար սատանայ, կամուրջին վրայ փորս մտնալով զիս գլխէ՞ հանելուդ, երթայի՞ր սա այր և կնոջ մէջտեղը մտնայի՞ր և քու ճարպիկութեամբդ անանկ ընէիր որ կինը չի ճըգար կէս գիշերուն:

Ձայները քանի կերթային ալ աւելի ուժով կարճագանգէին՝ չորս պատերեն ներս մինչեւ ականջներս: Ալ դիմանալու բան չէր, մէկ ոստուժով՝ սիւռքին լարախաղացներուն պէս՝ վերէն վար բռնի վիճակիս մէջ անկողնէս դուրս ցատկեցի. մոմը վառելս, բանթալօնս հագնելս, դուռը բանալս և դուրս նետուիլս երկու վայրկենի գործ եղաւ:

Դուրսը կառսոններէն մին՝ որ նոյն ատեն հող կը գտնուէր, կապիկի պէս աչքերը բանալ գոցելով ինձ մօտենալուն:

— Նէ՛ տիր ճանըմ, նէ՛ բաթըռտը տըր՝ մատամը քի՛մ սըգըշտըրըյօր... չօք չէ՛յ... տահա կէօզիւմիւ գափամա՛մըլըմ... կ'ըսեմ բարկացած:

— Ա՛ ... մուշու, պիլմէզսին ... մա-
տամա ցոծուգ եաբբյօր ...

— Ա՛ ...

— Մատամա, աղբի ցէքիստիւիտ, քայ-
մէնէ, ցոծուգ եաբաժագ ...

Շան ծնունդ ... կինը երկունքի ցաւե-
րը կը քաշէ կոր եղէր ... ճիւղ ախանջիս
տակը, սենեակիս մօտիկը:

Ու որովհետեւ գիտեմ թէ աղաբերքը կէս
ժամուան գործ չէ, ուստի ինքզինքս դա-
տապարտուած կզգամ մինչեւ լոյս լսել
140,000 մանցիսմու, և այնքան մըն ալ
խափօխօնախափու, բառեր, զորս յղի կին մը
իր վերջին ցաւերուն կողզէ ամուսնոյն հան-
դէպ:

Եւ սակայն մինակ ես չեմ որ քունս ը-
ռաֆը դրած՝ իբր թէ ցաւ քաշող կնոջը խը-
լալուզը ըլլայի, դուռնէն դուրս պոռթկա-
ցող, մեր կարգին վրայ գանուած սենեակ-
ներէն ալ տակաւ, խնունջի պէս գլուխներ
կը տեսնեմ, որոնք հետագրգիւր ախարկներ
կը ձգեն դէպի մեր կողմը, այդ գլուխներուն
մէջ երգեմն երկայն մազեր ալ կերեւին կար-
ճերուն քով ... բայց ինչո՞ւս պէտք, ինձի
ո՞վ հրաւիրեց հող, թող չիգայի, թող չի
գանուէի, օխը փորս ...

Ու երբ բարկութեանս զենիթը հասած
կեցած եմ դրանս սեմին վրայ, յանկարծ գըլ-
խարկը քօմիսիօնէի մը՝ ամառ օրի մը կա-
մուրջէն անցած ատենին պէս դրած մէկը,
ինձ մօտենալով՝

— Սա բառաքալօ քիոիէ, էսիս եաթու՞
իսէսթէ ...

— Բառսօն, կ'ըսեմ մարդուն, քրտինք-
ները դիտելով, որոնք չըփըռ չըփըռ ճակա-
տըն ի վար կը վազէին:

— Սիդ հէքի՞մ ... կ'ըսէ մարդը շուա-
րած ...

— Եօգ ճանըմ, նասը՛լ հէքիմ, պէն, եա-
թընօրըտրմ, սիզին մատամ ... ու պիտի
չարունակէի խօսքս, երբ մարդը խօսքս կըտ-
րելով,

— Էվէթ, նա պիզիմ մատամ ցոծուգ
եաբիստիւիտ ...

— Նա՛սըլ եաբըշաբըբյօր, կըսեմ, զար-
մացած, իբր բառչա՞մ մը տօղուստու ...

— Քալէ եօգ գայմէնէ, տահա եաբիս-

տիւամատի, նա բօնօսթու բօլի սֆիթտա-
էնքունտէ ...

Ախպար ի՞նչ տեղը կար որ ես իմ բամ-
բուլ անկողինս ու հանգիստ քունս ձգէի ու
գայի այդ քօքօնային աղաբերքը լսէի ...

— Էյ միւսիւ պիր հէքիմ կէթիր պարէ ...
կ'ըսեմ կարեկցելով:

— Հէքիմ տէն կանի, թէլի լալութա ...
կ'ըսէ մարդը, ոտքին մէկը դնելով միւսը
վերցնելով,

— Ինչալուհ տօղուստո՞ւնտա, լալութա-
տա կէթիրիրսին, քէմէնչէտէ, ամա չիմտի
հէքիմ իսթէր միւսիւ, աքուշէօն ...

— Հա քօշար, քօշար պէս քօշար, մա
տէնքսէվոօ բու թալոօ ի եաթուէ ... ըսե-
լով սանդուխն ի վար կը վազէ, մինչ ներսը
քօքօնան ճանկ ճանկ կը պօռայ՝

— Ամա՛ն ... մանիցամու, բէթէնօ, ֆօզ-
մու, քառտեամո՛ւ ...

— Կառսօն կէլ պուրաեա կըսեմ ու թե-
ւէն բռնելով ներս՝ սենեակս կը քաշեմ.

— Նէ էչէկիք տիր պու, կ'ըսեմ կրակ
կտրած, նէ՞ իչին պէնի պու գառընըն եանը-
նա գօյտունըզ ...

— Քալէ քոիմաս, ի քօքօնա քանի բէ-
տի ...

— Պանա՞ նէ պէ, քումպառօս պէ՞ն մի
օլաճաղըմ, կ'ըսեմ, շան պէս դողալով գի-
չերուան դովէն, բարակ ֆանէլայով մը կե-
ցած տեղս ...

— Նա սիմտի, տօթթօն՝ կէլէծէք, ցա-
բուք ցարուք ցոծուգ եաբաժագ ...

— Քի՛մ եաբաճագ պէ, նէ՞ տէեօրսուն
կըսեմ, կարծելով թէ մարդը ծաղրել կու-
զէ զիս ...

— Օհի քալէ, նա սիմտի գօճասի կիթ-
միս, եաթուէ կէթիուէծէք քէ թօ բէտի թա
եէնի ...

— Պաշկա վազըթ պուրտա չօճուգ տօ-
ղուրուրլա՛ր մը, եօգսա պու ագչամ իլք
տէֆա տըր քի պաշմա կէլիեօր ... կը հար-
ցնեմ:

— Եօգ քայմէնէ, ցօգ վազիթ պուրտա
քօքօնալար կէլիր, էյ իցինտէ վառ քի եա-
բառ ցոծուգ ...

— Էօյլէ իսէ սիզին պէօյիւք գաբունըն
իւզէրինտէ՝ Hotel des enseintes եազընըզ ...

— Ապսենթ տէ վերմիս գծասի, ֆա-
գաթ սանծիք տուրմայօր ...

Հանդիպելով հանդիպեցանք, ճար չիկար,
մենք մինչեւ առաւօտ garde maladeի դեր
պիտի կատարէինք, և պիտի քնանայինք այն
ատեն միայն՝ երբ քօքօնան պոռթկար:

Մինչ այս մինչ այն՝ կինը ներսէն ալ ա-
ւելի սկսաւ պոռալ, յունարէն բաներ մը
կըսեր զորս չէի հասկնար, սակայն անպատ-
ճառ հայոյութիւններ էին անոնք էրկանը
հասցէին ուղղուած:

Ի՛հա սենեակներէն արթնցողներ բոլորն
ալ մոմ ի ձեռին կուգային մեր կողմը, և ու-
րովհետեւ միմիայն իմ դուռն քաց էր, ու ես
կանգուն կեցած սեմին վրայ, ինծի կը հար-
ցնէին ...

— Նէ՛՛ օլմո՛ւչ ...

— Պի՛նէմ, հաստա վար ... կը պատաս-
խանեմ մէկուն, մինչ ուրիշ մը վարտիքով
շապիքով վրաս կը վազէ ...

— Բի՛մ էօլմիւ՛ւչ ...

— Էօլէն եօգ, սանճը եաքըյօր քօքօնա,
կըսեմ անոր ալ, և ահա ուրիշ մը կը հասնի ...

— Քէս քիլիա մէսիէօ ... քի էս քի
քոի ...

— Սէթ իւն տամ քի սուֆո կ'ըսեմ ի-
րեն, իբր թէ՛ զիս գիտմամբ հող դրած ըլ-
լային պատասխան տալու համար ամէնուն:

Իրարանցումը կաւելնայ, ձայները ալ ա-
ւելի կը կրկնուին, մինչ ամուսինը բժիշկ մը
առջին ձգած սանդղակներէն վեր կելլայ ու
չիտակ իմ սենեակս ...

— Նէ վա՛ո ... կը հարցնէ ինծի ...

— Բառտօն տօքթօն, հաստա պէն տէ-
յիլիմ, նա միւսիւնին մատամը եանընտաքի
օտատա ... կըսեմ, և արդեն ամուսինը զայն
իր սենեակը կառաջնորդէ:

Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՛ւ, պէ
ճանը՛մ, ինչո՛ւ քաշեմ այս բոլորը, ինչո՛ւ
մշիկ մշիկ չի քնանամ տունը բամբուլ մահ-
ճակալիս մէջ և հոս ստիպուած ըլլամ նեղ-
ուիլ ուրիշի մը համար, որ «յանուն քաղա-
քավարութեան» էն դուրս բացառիկ բան
մըն է ... ինչո՛ւ ...

Միջոց մը ձայները կը կտրին, ամէն բան
կը հանդարտի, ու կը կարծեմ թէ տղան ծը-
նած է ալ, ու դուռն գոցելով հազիւ ան-

կողին պիտի մտնամ, յանկարծ այս անգամ
ալ միւս քովի սենեակէս ահագին կռիւ մը:

— Բալէ սէն ութանմա՛զսին, նէ իսին
վառ պէնիմ օտատա ... կը պոռար մանկա-
մարդ կին մը:

Նորէն դուրս կը նետուիմ անկողինէս որ
դեռ տաքցուցած չեմ, և ի՛նչ տեսնամ
դուրսը:

Տարեց մէկը վարտիքով շապիկով ամուրի
կնկան մը սենեակէն դուրս կելլար, մինչ
կինը սոսկալի պոռչտուքներով պատիւ կը
պահանջէր ...

Վերջէն հասկցանք որ խեղճ մարդը քու-
նը գլուխը իր սենեակէն ելլելով 100 թիւը
այցելութիւն մը տալ ստիպուե՛ր՝ և դարձին
շուարեկով մտեր է տիկինին սենեակը, զոր
նախորդ իրարանցումին քաց ձգուած է ե-
ղեր մոռացմամբ, և չիտակ մահճակալին մօ-
տենալով հազիւ վերմակը վեր առեր մէջը
պիտի մտնայ ... կինը սկսեր է պոռալ ...:
Դիտմամբ թէ դիպուած, ալ չեմ գիտեր,
իմ գիտցածս սա է որ, երբ այս պատահարն
ալ վերջացաւ, արդեն լուսը ձեղքուած էր,
և տակաւ կը լսուէր փողոցին վրայ խանութ-
ներու փեղկերուն շունդալից բացումը:

Ելայ: Արգէն պառկած չէի՛ որ: Երեսրս
լուալով սկսայ հագուիլ: Երբ սանդղակներէն
վար կի՛նայի՝ օթէլէն մօկնելու համար, ցաւ
քաշողին սենեակէն սկսաւ լսելի ըլլալ նո-
րածիւնին ետեղառան՝ ունդա՛յ... ունդա՛յ...
ունդա՛յ ...

Բարեպտուղ զաւակ, ըսի ինքնիրէնս,
եթէ օր մը մեծնալու ըլլաս, պիտի կրնաս
արդեօք ճանչնալ անձանթ մէկ ազգականդ
որ, մօրդ ցաւերուն ինքն ալ մասնակից՝
գիշերը լուսէ լուս չէ քնացած:

ԼԻԼԱ

Բարոյական. — Ամուսնացած էք, ըն-
տանիք, տուն տեղ ունիք ..., գիշերը
դուարճութեան համար ՄԻՆԱԿ Բերա մի՛
մնաք, եթէ մնաք իսկ՝ նախապէս օթէլին
կառսօնին հարցուցէք:

— Օտամըն եանընտա չօճուգ եաբաճագ
գառը վա՛ր մը ...:

ՆՈՅՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Ամուսնութիւնն՝ է հոլաքել քիթն՝
Որ կը սաւառնի շուրջ սիրոյ-ծաղկին ,
Գիտակից կեանքն՝ է այն մարդերուն դեռ
Որք կը պատրաստուին առնել իրենց կին:

Ամուսնութիւնն՝ է հեզասահ վրսակ
Որուն ալիքներ կ'ընթանան միշտ ջինջ ,
Սուրբ յոյզեր կուտայ յոյ մեր լանջին տակ
Ու իսկոյն կ'ըսենք... գուր կեանքն է ո՛չ ինչ...:

Ամուսնութիւնն՝ է սիրոյ-խրնկաման ,
Ոյ մէջ կը մըխան կոյս ու պարմանի
Խօլ իղձէ՛ր յոյզէ՛ր տենցեր յաւիտեան
Տալով ... մեր սրբին յայնժամ կը մարի ... :

Ամուսնութիւնն՝ է նեկսար կեանքին
Մարդ երբ զայն կ'ըմպէ չ'ըլլար անձնամոլ ,
Անով կը մոռնայ սիրոյ լրկանքին
Ազդած տաղտուկը ու իւր տագնապ խօլ :

Ամուսնութիւնն՝ է դաշինք մը սուրբ , վեհ
Անով կամոքին ցաւերը սրբին ,
Խայտայ կը հրեմուի մարդըն իսկ նրժդեհ
Նոր աւիւն կ'առնեն ըզգացմունք ցրտին...:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍԳԷԶԻՐԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ

Տնօրէնութիւնն նկատելով որ նոր շրջանի
առաջին թիւին մէջ գործակալներու մասին
ըրած յայտարարութիւնը կրնայ ըլլալ որ ա-
կամայ տեղի տայ սխալ հասկացողութեան
մը, յանձին մեր ժրաջան և գործոն մէկ քա-
նի գործակալներու ալ, ուստի ներկայիս
կուգանք թուել անունները մեր պատուաւոր
գործակալներուն, որոյ կը խնդրենք ըստ ա-
ռաջնոյն շարունակել իրենց գործը ի քաջա-
լերութիւն հանդէսիս:

Իզմիր. — Կարապետ էֆ. Մալեճանեան:
Էսիրէ. — Գէորգ էֆ. Աբրահամեան:
Պանսրմա. — Թադւոր էֆ. Չէրչեան:
Ասաբազար. — Սարգիս էֆ. Խաչուկեան:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Մեր Օգոստոսիան Բարեխնամ Վեհափառ
Կայսրը գնահատելով Վսեմ. Նշան Էմ. Գու-
կասեանի տարիներէ ի վեր բարւոյ ծառա-
յութիւններն բժշկական վարժարանին մէջ
իբրեւ տիպար դասախօս Տարաբանութեան,
Բարեհաճած է շնորհել *Խաչ սանիսի* աստի-
ճանը, իբր գնահատական իր այնքան ար-
դիւնաւոր աշխատութեան:

Խմբագրութիւնն ջերմապէս շնորհաւորե-
լով Վսեմ. Նշան Էմենին, ի սրտէ կը խըն-
դակցի իրեն վիճակած այս բարձր գնահա-
տմին առթիւ:

* * *

Դերմանական Դեսպանատան քարգմանի
օգնական Ազն. Հայկ Էմ. Թայֆեսէնեան, որ
քիչ ժամանակուան մէջ կրցած է շահիլ քէ
Դեսպանական մարմինին եւ քէ բոլոր զինք
մօտէն ճանչցողներու սերն ու համակրանքը,
այս անգամ Օսմ. Մեծագոր Պետութեան կող-
մէ ստացած է Դ. կարգի *Օսմանիէ* պատուա-
նշանը:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները եւ խըն-
դակցութիւնները:

ԹԱՆԳԱՐԱՆ

Ստացանք Նշան Պապիկեան գրասունեն
Հ. եւ Զ. Ասատուրի Թանգարան հասցնէիր
հաստատներու, արձակ եւ ոտանաւոր բարձ-
րագոյն դասընթացի համար, որ 322 էջերով
գեղեցիկ հաստ մըն է, զարդարուած օտար
եւ հայ հեղինակներու տառ մաքուր եւ յսակ
պատրաստուած կենդանագիրներով:

Հեղինակներուն անժխտելի կարողութիւնը
միացած, բժախնդիր ու յարատեւ աշխատու-
թեան մը, սպասուած դասագիրքը ըրած են
այս գործը:

Գիրքին գինն է 9 դրու:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐ. — Խաչի տօնին առթիւ հոս հասնող կարգ մը ընտանիքներ, Սէլամըզի բանայիրը տալով զուռնաւը չըլլալուն համար մէկ օրէն ետ դարձան. . . (Անշուշտ ի մեծ ուրախութիւն տնեցիներուն քանի որ հացը 55 փարայ է: Ծ. Խ)

ՆՈՅՆ. — Տեղացի օրիորդ մը երեք գիշեր երազին մէջ եգիպտացորենի հասկեր տեսած ըլլալուն «մութլախ խսմէթս հոն է, ես միսիր տեսայ» ըսելով գիշեր ցորեկ մօրը գլխուն միսը կուտէ եղբր որպէսզի հոն երթայ: (Օրիորդ, թռէնով դացէք և ճամբան եէտի-Գուլէ հանդիպելով Ս. Փրկչի մատուռն ալ մոմ վառած կ'ըլլաք: Ծ. Խ)

ԲԵՐԱ. — Հոս կարգ մը վարժապետներ ամէն իրիկուն թագսիմի նըպարավաճառին կռնակի իւղի տակ առններուն մօտ օղի կը ճնկեն. ի՞նչ կ'ըսէք ասոր. . . (Իրենք օղին, պատկանեալ ժողովն ալ այս լուրերուն կողովը կուկուտան. . . մեզի անուշ ըլլայէն զատ ոչինչ կը մնայ ըսել: Ծ. Խ)

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Օրաթերթի մը մէջ ծանօթ բժիշկ մը կը գրէ «Մարդկային մարմինին չուրջ», լաւ կըլլայ եթէ մէկն ալ ելլէ «քէօմիւրի չուվալներու չուրջ» բան մը գրէ որ ալ աւելի օգտակար պիտի ըլլայ կարծեմ ձեր մեռնամուտի առիթով:

ՍԱՌԸՆԱՐ. — Անցեալ իրինկուն ծովեղերեայ զբօսարանին յաճախորդներէն մին գիշերաշրջիկ ըլլալուն երբ ճերմակ գիշերնոցով մոմը ձեռքը վեր

վար կը պտտէր, յանկարծ տեսնող ուրիշ մը զայն բերի կարծելով, ինքզինքը պատուհանէն վար նետեր է թէեւ, սակայն անձի ո'ւ է վտանգ չիկայ:

ԱՄԲԱԿՈՒՄԻ ՀԱՆՆԼՈՒԿԻՆ ԱՐԴԻՆՔԸ

ԼՈՒԾՈՒՄԸ ՍԱ՛ Է

ՇԱՏ ՀԻՆ ԳԻՆԻՆ ՀԻՒԱՆՂՆԵՐՈՒՆ
ԿԸ ՏՐՈՒԻ

Առաջին անգամ խմբագրութեանս հասցուցած է լուծումը՝ Տեար Յ. Սուճեան, Սաւրգիյէ խան թիւ 3, որ կստանայ խոստացուած նուէրը:

Իսկ ճիշդ լուծած են նաեւ Տեարք.

Պետրոս Մ. Ալեանաքեան

Վաղարշ Թագւորեան՝ Իւսկիւտարէն

Ագրիպազ Գաղանձեան՝ Գարթալէն

Սուրէն Եաղուպեան

Յարութիւն Բ. Խուպէսէրեան

Արամ Սերովբեան

Ահա շատերէն դիւրին կարծուած հանելուկ մը, զոր սաչափ հոգի կը լուծեն միայն:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆ Ք

Երկու իրարու բնաւ չի նմանող թիւեր բազմապատկել և արտադրեալն ունենալ՝

Ինք հաս մեկ, եւ ոչի՛նչ աւելի:

Մինչեւ Զորեքշաբթի ճիշդ լուծողներէն մին վիճակաւ պիտի ստանայ 1906-1907 Հաճախագիտակի փառակազմ մէկ տարեկան քօլէքսիօնը:

Արտագրութեան ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻՔԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

— Ապահովուեցէք Պարոն Ժէնպուա, պո-
ռաց Լիւբէն, որ գրասեղանին մէջէն գանձ
մը չգտայ, միակ պատճառը պատմական ը-
լայն էր, դայն բաւական ատենէ կը փնտռէի:
Այդ մահովենիէ գրասեղանը գտնուեցաւ
գաղտնի փոքր տունէ մը, ուր կ'ապրէր
Մառի Վալէվսքա, և իր մէկ դարակին վրայ
հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Նուիր-
ուած Նաբոլէօն Ա.ին, իր շատ հաւատարիմ
ծառայէն՝ Մանսիօնէ»: Եւ վերեւը, սա
բառերը դանակի մը քիթովը փորագրուած.
«քեզի՝ Մառի» յետոյ, Նաբոլէօն, Թագուհի
Ժօզէֆինի համար՝ ճիշդ նմանը չինել տուաւ,
անանկ որ՝ այն գրասեղանը որ Մալմէզոյի
մէջ կը գտնուի, և այսօր հիացում ազդած է
ամէնուն, անկատար ընդօրինակութիւնն է
ասոր՝ որ ասկէ հոքը իմ քօլէքսիօններուն
կը միանայ:

Պ. Ժէնպուա մըմնջեց.

— Աւա՛ղ, եթէ գիտցած ըլլայի, վաճա-
ռականին մօտը եղած ատենս ձեզի կը թողէի:

Արսէն Լիւբէն յարեց խնդալէն:

— Եւ մանաւանդ սա առաւելութիւնը
պիտի ունենայիք որ 23րդ սէրիի 514 թիւը
մինակ դուք պիտի առնէիք:

— Եւ դուք ալ աղջիկս չպիտի առնէնս
գէիք:

— Բայց սիրելի պարոն, կը սխալիք, Օր.
Ժէնպուան առեւանգուած չէ, իր կամքովն
է որ պատանդ եղաւ քովս:

— Իր կամքովը, կրկնեց Պարոն Ժէն-
պուա:

— Այո՛, իր կամքովը յանձնուած էր իր
օժիտը շահելու համար, և դիւրին էր իրմէն
հասկնալ որ ուրիշ կերպ չպիտի կրնար յաղ-
թել ձեր յամառութեանը:

— Բայց ինչպէս իրեն հետ համաձայնե-
ցաք:

— Ես չեմ որ իրեն հետ համաձայնեցայ,

և նոյն իսկ պատիւը չունեցայ զինքը ճանչ-
նալու, անձ մըն է իմ բարեկամներէս որ
յանձն առած էր ընել բանակցութիւնները:

— Ինքնաշարժին խարտեաչ կինը ան-
տարակոյս, ընդմիջեց Պ. Տէթինան:

— Ծշղիւ, Լիսէին մօտը տեսակցութենէ
մը ետքը, ամէն բան կարգադրուած էր,
անկէց ի վեր, Օր. Ժէնպուա և իր նոր բա-
րեկամունին ճամբորդեցին, այցելելով Պէլ-
ճիքա և Հոլանտա, ձգէ՛ որ ինք ձեզի պիտի
պատմէ:

Դուրսի սրահէն հնչուեցաւ երեք հար-
ուածներ, յետոյ առանձին հարուած մը լսուե-
ցաւ: Արսէն Լիւբէնի մէկ նշանին վրայ Պ.
Տէթինան փութաց դէպի դուռը:

Երկու դեռատի կիներ ներս մտան, մէկը
Ժէնպուայի բազուկներուն մէջ նետուեցաւ,
միւսը Լիւբէնին մօտեցաւ, բարձր հասակ մը
ունէր, ներդաշնակ մարմին մը, դէմքը քիչ
մը տոգոյն և խարտեաչ մազերը թոյլ մը
ծփուն՝ երկուքի ձեղքուած էին:

Արսէն Լիւբէն անոր հետ քանի մը բառ
փոխանակեց և Օր. Ժէնպուայի դառնալով.

— Ներողութիւն կը խնդրեմ Օրիորդ,
այն ամէն վիշտերուն համար, որոնք ձեզի
պատճառեցի, բայց վստահ եմ սակայն որ
շատ դժբաղդ չեղաք:

— Դժբա՛ղդ, շատ երջանիկ պիտի ըլլայի
եթէ հայրս քովս գտնուէր:

Նորէն Օր. Ժէնպուա հայրը գրկեց: Ար-
սէն Լիւբէն մինչեւ պատուհանը մօտեցաւ:

— Այս բարի կանխմարտ միշտ հո՞ն է,
այնքան պիտի ուզէր ներկայ գտնուիլ այս
սրտաշարժ ընտանեկան ուրախութեան. մարդ
չիկայ ... ոչ ինքը և ոչ միւսները: Սատա-
նայ, դուանը մէջ ըլլալու են, դուստպանին
մօտը նոյն իսկ սանդուխներուն վրայ:

Պ. Ժէնպուա շարժում մը ըրաւ: Հիմակ
որ աղջիկը վերադարձած էր, իրականութիւ-

նը զգալապէս կը պարզուէր, ինքնաբերաբար քայլ մը առաւ, կարծես զիպուածով Արսէն Լիւբէն առջիւր ելաւ:

— Ո՛ւր կերթաք Պ. Ժէոպուա, զիս պաշտպանելու անոնց դէմ, պա՛հ, կերդ-նում որ անոնք ինձմէ աւելի շփոթած են:

Զանգակի մը թրթռալուն ձայնը լսուեցաւ:

Յանկարծ Լիւբէն անշարժութեան մատնեց Պ. Ժէոպուան և խրոխտ ձայնով մը.

— Տեղերնիդ պարո՛ն, մտածեցէք ձեր աղջկանը վրայ, դալով ձեզի, Պ. Տէթինան խօսքերնիդ բռնած եմ:

Առանց աճապարելու, գլխարկը առաւ, կամաց մը դուռը բացաւ և խարտեալ կնոջ ուղղելով խօսքը.

— Կուգա՛ք, սիրելի բարեկամուհիս:

Դուռս ելան:

Զանգակի թրթռում մը, յետոյ ուրիշ թրթռումներ և ձայներ ու աղմուկներ սանդուխներուն գլուխը:

Աներկիւղ, Պ. Ժէոպուա դուռս ելաւ:

Արսէն Լիւբէն և խարտեալ կինը հոն չէին: Սալօնին դուռը բացաւ Կանիմարտ ներս մտաւ:

— Այդ կինը ո՛ւր է և Լիւբէն:

— Հոն էր ... հոն է:

Կանիմարտ յաղթական ճիչ մը արձակեց:

— Կը բռնենք ... տունը պաշարուած է:

Պ. Տէթինան առարկեց:

— Բայց ծառաներուն սանդուխը:

— Ծառաներուն սանդուխը բակը կը հասնի և մէկ ճամբայ մը կայ մեծ դուռը, տասը հոգի դուռը կը պահպանեն:

— Բայց մեծ դուռնէն չէր որ եկաւ և անկէց չպիտի երթայ:

— Է՛հ, ուրկից կրնայ երթալ, պատասխանեց Կանիմարտ օղբն մէջէն:

Տէթինան վարագոյր մը բացաւ: Նրբանցք մը երեւաց որ խոհանոց կերթար, հոգ կանիմարտ, հասկցաւ որ ծառաներուն, սանդուխին դուռը գոցուած էր:

Պատուհանէն ոտիկաններէն մէկուն կը ձայնէ.

— Մարդ չեկաւ:

— Ոչ ոք:

— Այն ատեն, պօռաց կանիմարտ, յարկաբաժնին մէջն են, սենեակներէն մէկուն մէջ պահոււրտած են, անկարելի է որ փախած ըլլան, իմ պզտիկ Լիւբէնս այս անգամ ձեռքս է:

Բ. ԿԱՊՈՅՏ ԱԳԱՄԱՆԴԻՆ ՊԱՏՄԱՌԻՓԻՒՆԸ

Իրիկուան ժամը եօթին, Պ. Տիւտուի՝ Ոստիկանութեան պետը, զարմացած նոր լուրեր չառնելուն վրայ, Քլարէյրօն փողոց եկաւ, պահապան կեցած ոստիկանները հարցաքննեց, յետոյ, պարոն Տէթինանի քով ելաւ, որ զայն իր սենեակը առաջնորդեց:

Հո՛ն, մարդ մը նշմարեց, կամ աւելի ճիշդը, երկու սրունգներ որոնք գորգին վրայ կը շարժէին՝ մինչդեռ իրանը վառարանին խորն էր:

— Օհէ՛ ... օհէ՛ ... կը պօռար խեղդուկ ձայն մը.

Եւ հեռաւոր ձայն մը՝ որ բարձրէն կուգար, կը պատասխանէր.

— Օհէ՛ ... օհէ՛ ...

Պ. Տիւտուի խնդալով պոռաց.

— Է՛հ նայինք Կանիմարտ, ի՞նչ ունիս որ ծխայարդարութիւն (օճաղճըլըզ) կ'ընես կոր:

Քննիչը վառարանէն դուռս եկաւ, զէմքը սեւցած, հագուստները մուրտ, աչուրները յուզմունքէն փայլուն: Անճանաչելի դարձած էր:

— Զայն կը փնտռեմ մրմռաց.

— Ո՛վ.

— Արսէն Լիւբէնը ... Արսէն Լիւբէնը և ընկերուհին.

— Ա՛հ, բայց կը կարծէք որ վառարանի խողովակներուն մէջ պահոււրտած ըլլան: Կանիմարտ ոտքի ելաւ.

— Ո՛ւր կուղէք որ ըլլան պե՛տ, պէտք է որ տեղ մը եղած ըլլան, անոնք ձեզի և ինձի պէս էակներ են միսէ ու ոսկորէ, այդ էակները մուխի պէս չեն անյայտանար:

— Ո՛չ, բայց կերթան:

(Շարունակելի)

ՄԵԾ 4 ԱՃԱՌԱՏՈՒՆ.


1476926743

Արանց, Կանանց եւ Տղայոց :
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և ՇՆԿ.

Կ. Պոլիս, Սուրբաճ Զատնալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ և գիններու անփոփոխ
աժանութեամբը չահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հազուստներու, կանանց բոլորիներու
և տղայոց շէք և դիմացկուն փոքրիմ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հազուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից :

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է։
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին : 50—4



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷ՝Գ

ՊՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՄԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ իսանի
սահ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որը ուղղակի ներածուելով Սեյսանէ,
Զինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
պոնէ:

Ամենէն զօրաւոր հաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէ յերու թարմութեամբ
հոտովն ու համովր :

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ :

Ուշադրութիւն Վարձատիր :

OF JOSEPH

ՀԱՅԿԱՅԻՆ ԿՈՄՍՏԵՆՍԻՆԻ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐԱՄԲ ՊԷՏԲ ՈՒՆԵՆԱԼ

ԴՊՈՒՑԱԿԱՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԴԱՄԱԳՐԶԻՐԻՔ՝ ՈՐՈՐԲ ՎԱՆՏԱՐԱՆԺ
ԻՐԱՆ ՊԱՏ. ՈՒՍՄԻՆ. ԽԱՐԽԷԼԻՆ:

ՏՆՏՐԷՆ, ԴԱՏԻՍԱՐԱԿ, ԾՐԱԿԱՆ ՌԻՍՈԻԶԻՉՆԵՐ՝ ՈՒ՝ ՈՐՈՆԲ ԵՐԱՆԵ
վկայեալ, պարկեց ու փորձառու:

ՄԱՆԿԱԽՈՐՀԷ՛Ք, ՁԵՌՎԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՈՒԹԵԱՆ ՆԻՅԵՐՊԻ:

ՏՆՆՈՑ ՆՈՒԷՐԻ շԱՍՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԹԵՐ ՈՒ ՔՈՒԽՔ, զԻՆ, ՍԵՂԱՆ, ԿԱՊԱՆԱՐ, մԱՍԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՏՐԱԿ, ԲԱՐԲՐԻՆ, ԲԱՐԵՏԱԽՍԱԿ, ԿԱԼԻՆ, զԺԱԳՐՈՒՅԵԱՆ զԱՄԱԶԱՆ ՄԵՐԿԵՐ ԵՎՆ:

Հարցաճգ՛, ու անհշարժու պիտի պատասխանուի
ապարեղճ՛, ու պիտի ստուգուի օրն օրի՛ն

ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻԱԳՈՅՆ ՇԵՂՁՈՎ

ԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Օ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան սակոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, հայրն. նաեւ անուններու սկզբնառաւով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զլիարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերաբերուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խոստ, ամերիգան, պամա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանք տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

50—43

ՓԱԼԱԳԱՅԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գաթը-գիւղ, Մէօհիւրսար
հասէսի:

Շրդ Տարեցում

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական ֆանիաթեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօս-

սելավարժութեամբ (բռաքիֆ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կարու Զե, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ: Գիշերօթիկները կը վայելին կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսչուհին: Մասնաւոր տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շր. օրերը ժամը 5 էն 9 դիմելով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-ՏԵՐԵՆ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՅԵԱՆ